

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027թթ
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ճամբարակ 2024

Բովանդակություն

Ներածություն	3
1. Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները	5
2. Ճամբարակ համայնքի 2025-2027թթ կանխատեսվող եկամուտները	6
3. Հնարավոր ռիսկերը	7
4. Եկամուտների վերծանումը ըստ առանձին տեսակների	8
5. Ճամբարակ համայնքի 2025-2027թթ կանխատեսվող ծախսերը.....	9

Ճամբարակ կամայնքի 2025-2027թթ միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է համայնքի զարգացման հեռանկարի թվային արտացոլումը և միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինսական փաստաթուղթը, որը ելակետ է հանդիսանում համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն նախագծելու համար:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է Ճամբարակ համայնքի առաջիկա 3 տարիների եկամուտները, ծախսային ուղղությունները ըստ ոլորտների, ինչը թույլ կտա միջնաժամկետ կտրվածքով ավելի արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով աշխատանքներ կտարվեն դրանց ավելացման ուղղությամբ, ինչը իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը: Ներկայացվում է նաև Ճամբարակ համայնքի առաջ ծառացած խնդիրները, ՄԺԾԾ-ի իրականացման ընթացքին խոչնդոտող ռիսկերը և դրանց իրատեսական գնահատումը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ Ճամբարակ խոշորացված համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ, ինչը ըստ էության հասանելի կդարձնի բոլորին՝ այդ թվում քաղաքացիներին, ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումը ըստ ոլորտների՝ թվային տեսքով:

Ճամբարակ խոշորացված համայնքի 2025-2027թթ միջնաժամկետ ծախսերի ծրագիրը կազմված է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով:

1. Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները

Ճամբարակ խոշորացված համայնքի 2025-2027թթ միջնաժամկետ ծախսերի ծրագրերի իրականացումը հիմնված է լինելու համաչափ և կայուն զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթություն են համարվելու՝

- Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի և վարչական միավորների ղեկավարների գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետվողականությունը:
- Հանրային տարածքների և շրջակա միջավայրի պաշտպանությունը:
- Մարդու իրավունքների պաշտպանության գերակայության սկզբունքներով որոշումների կայացումը:
- Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի ձևավորումը:
- Անվտանգ, հարմարավետ ու առողջ ապրելու և գործելու կենսամիջավայրի ապահովումը:
- Երիտասարդական ու սպորտային ծրագրերի միջոցով բնակչության շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
- Զբոսաշրջության ենթակառուցվածքների, էկոտուրիզմի զարգացման խթանումը խոշորացված համայնքի զբոսաշրջային միջավայրի բարելավումը:
- Բազմաբնակարան շենքերի հիմնախնդիրների լուծումը:
- Նախադպրոցական հաստատությունների և մատչելիության և ներառականության հնարավորությունների բարելավումը:
- Նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների հիմնանորոգում:
- Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում:
- Խոշորացված համայնքի գյուղական վարչական միավորների միջբնակավայրային, և ներբնակավայրային ճանապարհների ճանապարհաշինարարական լայնածավալ ծրագրերի շարունակականության ապահովումը, հեղեղումներից քանդված և վնասված դաշտամիջյան ճանապարհների վերականգնումը:
- Գյուղական վարչական միավորների փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը և հուսալիության աստիճանի բարձրացումը:
- Բնակչության սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:
- Գյուղատնտեսության շարունակական զարգացման խթանումը, այդ թվում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացումը,

ինտենսիվ այգեգործության զարգացման խթանումը, անասնապահության, կաթի արտադրության և վերամշակող արտադրության խթանումը:

- Խմելու ջրի ջրագծերի կառուցման և ներքին ցանցերի վերանորոգման աշխատանքները:

2. Ճամբարակ խոշորացված համայնքի 2025-2027թթ կանխատեսվող եկամուտները

Ճամբարակ խոշորացված համայնքի 2025-2027թթ եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 1094542, 1103738.5 և 1113289.8 հազ. դրամ:

Հատկանշանական է, որ ընդամենը եկամուտների կազմում աճ է նախատեսվում գրեթե բոլոր բյուջետային բաժիններում և խմբերում, մասնավորապես հարկ է նկատել Ճամբարակ խոշորացված համայնքի սեփական եկամուտների դինամիկան, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառմամբ, որի արդյունքում միջնաժամկետ կտրվածքով սեփական եկամուտների կազմում հիմնական աճը նախատեսվում է հարկ անշարժ գույքի մասով եկամտատեսակից և այլ ոչ հարկային եկամուտներից:

3. Հնարավոր ռիսկերը

Ճամբարակ խոշորացված համայնքի ՄԺԾԾ-ի իրագործման վրա հնարավոր ազդեցություն ունեցող ռիսկերն են.

- Համայնքը սահմանամերձ է Ադրբեջանի Հանրապետությանը, ինչով պայմանավորված համայնքի բազմաթիվ բնակավայրերում առկա են անմիջական սահմանային կամ ռազմական գործողությունների ռիսկեր:
- Համաշխարհային գլոբալ ռազմաքաղաքական և տնտեսական անկայուն վիճակը, գնաճի տեմպերը, վառելիքի, շինանյութի գների տատանումները իրենց բացասական ազդեցությունն են թողնում շինարարության տեմպերի, նախատեսված սուբվենցիոն ծրագրերի կատարման ժամկետների վրա:
- Գործազրկության բարձր մակարդակը նպաստում է բնակչության արտահոսքին, որն էլ իր հերթին անդրադառնում է տեղական տուրքերի հավաքագրման մակարդակի վրա:
- Սոցիալապես անապահով բնակչություն:
- Բարձրորակ մասնագետների բացակայություն:

- Ոռոգման համակարգերի բացակայություն (համայնքի գյուղատնտեսությունը հիմնականում անջրդի է), ինչը պարբերաբար երաշտային տարիների հետևանքով բերում է գյուղատնտեսական արտադրանքի նվազման, անասնակերի պակասի, արդյունքում անասնագլխաքանակի նվազմանը՝ հետևաբար նաև բնակչության վճարունակության անկմանը:
- Գյուղական վարչական տարածքներից շատերի հետ միջհամայնքային և ներհամայնքային տրնասպորտի բացակայությունը, ճանապարհների անբարեկարգ վիճակը բերում է գյուղատնտեսական արտադրանքի շուկաներին հասանելիության նվազմանը:

4. Եկամուտների վերծանումը ըստ առանձին տեսակների

Ճամբարակ խոշորացված համայնքի 2025-2027թթ եկամուտների կազմում սեփական եկամուտների ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 305806.7, 321197 և 337251.9 հազ. դրամ:

2024-2026թթ ՄԺԾԾ-ով սեփական եկամուտների կազմում էապես աճող եկամտատեսակներն են՝

1. Գույքահարկ անշարժ գույքի մասով համապատասխանաբար՝ 42920.9, 45066.9 և 47320.2 հազ. դրամ
2. Գույքահարկ փոխադրամիջոցների մասով համապատասխանաբար՝ 63191.1, 66350.7 և 69668.2 հազ. դրամ
3. Գույքի վարձակալությունից եկամուտներ համապատասխանաբար՝ 78485.4, 82409.7 և 86530.2 հազ. դրամ
4. Վարչական գանձումներ համապատասխանաբար՝ 50137.5, 52644.4 և 55276.6 հազ. դրամ, որից՝
5. Աղբահանության գծով վճարներ համապատասխանաբար՝ 19950, 20947.5, և 21994.9 հազ. դրամ

Պետության կողմից տրամադրվող, հատկացվող դրամաշնորհները՝ այդ թվում սուբվենցիաները և ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան 2025թ կկազմի՝ 712612.4 հազ. դրամ:

5. Ճամբարակ համայնքի 2025-2027թթ

կանխատեսվող ծախսերը

Ճամբարակ խոշորացված համայնքի 2025-2027թթ ծախսերը կանխատեսվում են համապատասխանաբար՝ 1005599, 1020164 և 1108720.3 հազ. դրամ և միտված են համայնքի համաչափ ու կայուն զարգացմանը: Ծախսերի քաղաքականության սկզբունքն է՝ լուծել համայնքի կայուն զարգացման ճանապարհին ծառացող խնդիրները՝ կատարելով դրանց դրանց իրագործմանն ուղղված բյուջետային ծրագրերը: Ծախսային մասը նախագծվել է հետևելով բյուջետային հաշվեկշռվածության սկզբունքին՝ ապահովելով բյուջեների կառուցման ստանդարտները և ներկայացնելով այն ըստ գործառնական տնտեսագիտական դասակարգումների, ինչպես նաև ըստ առանձին ծրագրերի:

Կանխատեսվող բյուջետային ծախսերը բաշխված են 2025, 2026 և 2027 թվականներին համապատասխանաբար հետևյալ կերպ.

Վարչական մասի ծախսեր

- 1) պետական կառավարման ապարատի պահպանման ընթացիկ ծախսերի ֆինանսավորում՝ 244332 հազ. դրամ, 244332 հազ. դրամ, և 244332 հազ. դրամ:
- 2) բնակարանային կոմունալ տնտեսության կողմից կատարվող ծառայությունների և աշխատանքների ծախսերի ֆինանսավորում՝ 120000 հազ. դրամ, 126000 հազ. դրամ, 132300 հազ. դրամ,
- 3) նախադպրոցական կրթության ոլորտի գործունեության ընթացիկ ծախսերի ֆինանսավորում՝ 133000 հազ. դրամ, 139650 հազ. դրամ, 146632.5 հազ. դրամ,
- 4) արտադպրոցական կրթության ոլորտի գործունեության ընթացիկ ծախսերի ֆինանսավորում՝ 46150 հազ. դրամ, 48457.5 հազ. դրամ, 50880.4 հազ. դրամ,
- 5) հանգստի և սպորտի ծառայությունների ծախսերի ֆինանսավորում՝ 1290 հազ. դրամ, 1354.5 հազ. դրամ, 1422.2 հազ. դրամ,
- 6) սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով ֆինանսավորում՝ 11000 հազ. դրամ, 11550 հազ. դրամ, 12127.5 հազ. դրամ,
- 7) փողոցների լուսավորության ապահովման համար ֆինանսավորում՝ 33700 հազ. դրամ, 35385 հազ. դրամ, 371543,3 հազ. դրամ,
- 8) գյուղատնտեսության համար ֆինանսավորում՝ 86200 հազ. դրամ, 90510 հազ. դրամ, 95035,5 հազ. դրամ,
- 9) Ճանապարհների հարթեցման և փոսային նորոգումների համար ֆինանսավորում՝ 9500 հազ. դրամ, 9975 հազ. դրամ, 10473,5 հազ. դրամ,

10) ընդհանուր բնույթի և աշխատանքների հետ կապված ծառայությունների ֆինանսավորում՝ 34030 հազ. դրամ, 39200 հազ. դրամ, 40680 հազ. դրամ, Նշված ոլորտներում ծախսերը կանխատեսվել են հաշվի առնելով վերջին տարիների փաստացի ցուցանիշները, 2025թ., 2026թ. և 2027թ. աշխատանքային ծրագրերը:

Բարեկարգ, անվտանգ, հարմարավետ ու մատչելի ձևավորման նպատակով համայնքում 2025թ, 2026թ., և 2027թ-ների համար ծրագրվել են հետևյալ կապիտալ աշխատանքների կատարումը.

Ֆոնդային մասի ծախսեր

- 1) Ճանապարհների ասֆալտապատում՝ 172000 հազ. դրամ, 180600 հազ. դրամ, 189630 հազ. դրամ,
- 2) Արտաքին և ներքին ջրագծերի ցանցերի կառուցում՝ 100000 հազ. դրամ, 105000 հազ. դրամ, 110250 հազ. դրամ,
- 4) փողոցային լուսավորության անցկացում՝ 75000 հազ. դրամ, 78750 հազ. դրամ, 82687,5 հազ. դրամ,
- 5) նախադրոցական կրթություն /մանկապարտեզների վերանորոգում/ 22000 հազ. դրամ, 23100 հազ. դրամ, 24255 հազ. դրամ,
- 6) արտադրոցական կրթություն / վերանորոգում/ 4000 հազ. դրամ, 4200 հազ. դրամ, 4410 հազ. դրամ,
- 7) Հանգիստ, մշակույթ և կրոն՝ 22000 հազ. դրամ, 23100 հազ. դրամ, 24255 հազ. դրամ,
- 8) Ճամբարակի համայնքապետարանի վարչական շենքի վերանորոգում 16500 հազ. դրամ, 17325 հազ. դրամ, 18191,3 հազ. դրամ,
- 9) Վարչական և այլ մեքենա-սարքավորումների ձեռքբերում 12000 հազ. դրամ, 12600 հազ. դրամ, 13230 հազ. դրամ,
- 10) ընդհանուր բնույթի կապիտալ ծախսերի ֆինանսավորում՝ 65200 հազ. դրամ, 69510 հազ. դրամ, 71883 հազ. դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԱԴԱՄՅԱՆ